

Սմբատ Բիւրատ  
 Խմբագրութիւն «Փիիւնիկ», Ի  
 Ալեքսանդրիա



S. Burat  
 Rédaction «PUNIG»  
 Alexandrie

ԵԳԻՊՏՈՍ  
 Դր. 45  
 25  
 ԲԱԺՆԵԳԻՆԸ  
 ԿՍՆՆԻԿ Է  
 Ձեռագիր եզրադարձակ  
 ձուր

ԱՐՏԱՍՍՆԱՆ

Տր. 15  
 8

# ՓԻԻՆԻԿ

Կը ծախուի Մէկ դրուս եղջի

ՊՈՎԿԱՍ  
 ՏՅԱԿԱՆ ԲԱՂ. 6  
 Ազդեր կ'ընդունուին մասնաւոր պայմաններով.

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Գ. ՏԱՐԻ

1 ՆՈՅԵՄԲԵՐ 1902

Թիի 18

## ՄԱՄՈՒԼԸ

### ԳՍՏԱԽՈՐ

Իրա՛ւ ի՛նչ տարբերութիւն կայ Ազգ. քսանդրոյ սա մեր ինկած խմբակին ու Աւետարանի Անառակ Որդիին միջև: Անառակ Որդին իր հօր ողջութեանը կերաւ սպառնաց իր ժառանգութեան ամբողջ բաժինը, գնաց պանդխտութեան մէջ շուայլ ու զեղխ ապրեցաւ, մինչև որ խողարած ալ եղաւ ու դարձի եկաւ վերջապէս:

Ինկած խմբակը՝ ձիգ Անառակին պէս, հայրենի հողէն իրեն ինկած բաժինը ծախած, կերած, ժառանգութիւնը վատնած, աճ մեն ազգային պատուէ ու փառքէ կապտուած մերկացած, ցեղին ձայնը խեղդած, արիւնը ջուր կտրած, ամեն սրբութիւն, օրէնք, իրաւունք, առաթուր կոխոտած, ամեն ազատ խօսք, ամեն վեհ խորհուրդ, ամեն ազնիւ զգացում ուրացած, մէկ խօսքով, ժամանակակից Անառակ Որդի այդ ինկած

Խմբակը՝ կամայականութեան ստորուկն ու փողարը դարձած, մեր այս գեղեցիկ ու ազատ միջավայրը տեսակ մը դժոխք դարձուցած է մեր գլխին:

Ամեն բանի վերջը կուգայ կ'ըսեն. ժամանակը շատ բան կը փոխէ. թշնամիները կը բարեկամանան, բարեկամները կը թշնամանան, մեղաւորները դարձի կուգան, կ'արդարանան, արդարները մեղապարտ կ'ըլլան: Ու եղաւ այնպէս:

Օրին մէկը, դարձի եկաւ ըսին, ու շատերը հաւատացին: Շուտով պառկեցուցին պարարակ եզը, մորթեցին, մատաղ ըրին, գիշերը լուսուցին, խրախճանքի ու խաղի մէջ հայրը կը տօնի որդիին, որ անառակ էր, երջանիկ վերագարձը:

Նոյնը պէտք էր ընել մեր ինկած Խմբակին համար: Ազուր օր մը, Հոկտեմբեր 18ին, երկու հարազատ եղբայրներ, ինկած խմբակէն, կը մտնան, եկեղեցիին դրանը քով, Աղմկալոյց խմբակէն մարդու մը, «Նոյնը» կ'ըսեն, կը պագտուին:

Նոյն օրը, դարձեալ Հոկտ. 18ին, դարձեալ Ինկած Խմբակէն պարագր-լուխ մը, կը մօտենայ, ծառի մը տակ, «Աղակաշոյզ» Խմբակի մականակրին ու «Մեղա՛յ» կը մըմնջէ: Ամեն բան լմբն-ցած էր: Գրկել, ողջագուրել, պագ-նել պէտք էր այդ դարձի եկողները, մեր մոլորեալ ոչխարները, մեր կոր-սուած եղբայրները:

Ուստի կնքուեցաւ դաշնակցու-թիւնը. կե՛ղծ դաշնակցութիւնը:

Սահմանադրութեան անունով այն-քան կռիւններ տեսած անցուցած պաշտպանները ժողովուրդին իրաւուն-քին՝ այս դաշնակցութիւնը կնքեցին հապճեպօրէն ու ներողամտօրէն, ա-ռանց հեռատեսելու հետեանքները:

Այդ կարծեցեալ դարձի եկողնե-րը չէին կրնար ու ընդունակ չէին մի-եւնոյն զգացումով, միեւնոյն համոզում-ներով ու միեւնոյն նպատակով ընթա-նալու իրենցմէ մտքով, սրտով ու հո-գիով շատ բարձր դաշնակիցներու հետ, որոնք անգրգուելի մնացած են իրենց անյեղլի սկզբունքներուն վրայ: Ըստ-րուկները գործ չ'ունին Ազատներու հետ. կամայականութեան Արբանեակ-ները խաւարի մէջ միայն կրնան երե-նալ ու երբոր փորձեն Օրէնքին ու Ի-րաւունքին պաշտպաններուն հետ հրա-պարակ իջնել, շուտով կը խայտա-ռակուին արեւուն լոյսին տակ:

Սակայն դաշնակիցներ եղան ա-սոնք ու գործակիցներ:

Ու գումարուեցաւ Միթիւնկը, «Ընդ-հանուր Միթիւնկը, ուր էին Երկեակ-Դաշնակցութեան զինուորները:

Այս ի՛նչ յեղաշրջում. դեռ երեկ դարձի եկան, ու այսօր, Միթիւնկ կը սարքեն անոնք, ինկածները, Միթիւնկ-ները ծաղրողները... բեմը, թիկնա-թառներ գրաւած են ու ժողովուրդին աչքին առջև կը ցուցադրեն իրենց ամբողջ խեղկատակութիւնը: Դարձի եկողները կրնային ներկաներուն կար-

գին մէջ նստիլ, հանդիսատես ըլլալ, առանց բեմէն երեւնալու և իրենց վը-րայ անկարելի գաղափար մը կազմել տալ յաւակներու:

Միթիւնկին ձեռք մէկգրի, նպատակն անոր ու արտայայտութիւնը գոնէ կ'արդարացընեն մեր ազատակեններուն աններելի ներողամտութիւնը հանդէպ ապաշաւողներուն:

Ընդհ. Միթիւնկին պատուական բանախօսը Տ. Մ. Տամատեան, իր կրակուրոց բանախօսութեան մէջ քըն-նադատեց ու բարձր ձայնով դատա-պարտեց նախորդ ու նախկին Թաղ. Խոր-հուրդներուն կամ Խնամակալութեանց գործերը. անվերապահօրէն, դարձի եկողներուն, կամայականութեան եր-կրրպագուներուն ականջները թնգա-ցուց իրենց պաշտպան կուռքերուն կործանման դղրդիւնովը:

Ու ժողովուրդը, Ինկած Խմբակի ներկայացուցիչներուն հետ, լուռ մուռ մտիկ ըրաւ ու հասու եղաւ կարգ մը գաղտնիքներու:

Բան մը միայն, որ զայրոյթը կը շարժէ մեր կարմիր համախոհներուն, այն է թէ ինչո՛ւ Փիւնիկը, — միշտ հաւատարիմ թարգմանը հանրութեան զգացումներուն ու փափագներուն — այս անգամ, փոխանակ հարուածելու արարքը Վսեմ. Բարթող Պէյի, ընդ-հակառակն, ի վեր հանած էր Նորին Վսեմութեան բարեացակամ դիտաւո-րութիւններն ու ծրագիրները, մօտ ապագայում գործադրելի, պաշտպա-նել յանդգնած էր Մարդ մը, որ եկե-ղեցին ոստիկան զինուորներ բերել ու ձերբակալուսներ ընել տուած էր:

Մէ՛կ պատասխան ունինք. Բար-թող Պէյը մեր ընտրելին էր, է ու պիտի մնայ միշտ ընտրելի, ցորչափ չա-րունակէ, այսպէս անշահախնդրօրէն ու սրտանց վարել ազգային գործերը, պաշտպանել մեր շահերը, պահպանել

մեր եկեղեցին, դպրոցը, աղքատները, բոլոր ինչ որ ազգիսն է:

Եթէ ունենայ թերութիւն մը, անկեղծ ըլլանք, քաջութիւնն ունենանք մօտենալու իրեն և համարձակ ըսելու զոյն իր երեսին:

Բարթող Պէյը տիրացու մը կուզէ քահանայացընել, իսկ Մելքոնեան էֆէնտին կը բողոքէ պաշտօնապէս:

Հաւատացէ՛ք, իր կրօնասիրութիւնն ու ազգային զգացումներն (սույրն'ի միշիյէ<sup>օօ</sup>.) ա՛յն աստիճան վիրաւորուած կը գտնէ որ կ'ստիպուի հրաժարիլ խնամակալութեան անգամակցութենէն: Երթա՛յ բարով...:

Ահա՛ խիղճը խնամակալի մը, որ կը յուզուի, կը տանջուի, չը հանդուրժեր, կ'ապստամբի գործուած զեղծումի մը, այն է Միհրան Ղազարունանի մը քահանայացման դէմ:

Ինչ փափուկ ու մաքուր խիղճ մեր ազգասէր խնամակալին խիղճը. խնամակալին, որ գէթ ինք պիտի չը ներէր իրեն, կրօնք, խիղճ, Հայաստանեայց եկեղեցի, ևն սուրբ բառերը բերանն առնել. ինք միա՛կ խնամակալն է որ նուազ իրաւունք ունենալ մեր եկեղեցիին անունովը խօսելու, այն ալ քահանայական ինդրի մը համար:

Թող տեղը հանդարտ նստի ու խելօքիկ, մենք իրմէ չը պիտի սովորինք քրիստոնէականն ու ընտանեկան բարոյականը:

Խղճո՛տ խնամակալներ, նախ դուք սիրեցէք եկեղեցին ձեր անձին ու ձեր ընտանիքին օրինակովը, յետոյ ելէ՛ք ճառեցէ՛ք ազգային ու կրօնային զգացումներու վրայ: Առանց այդ պայմանին, «սույրուի միշիյէ»-ը կը թարգմանուի միշիյէի պաշտումը ու անկէց անդին չ'անցնիր:

Ժողովուրդը պէտք է ուրեմն աչքը բանայ, զգուշանայ կեղծ առաք-

եալներէն, որոնք իր անունովը կը քարոզեն:

Իսկ անոնք, Սա՛մանագրականները, որ գիտցան ու գիտեն միշտ պաշտպանել օրէնքը, պիտի գիտնան նաև այսուհետև աւելի աչալըջօրէն դատել մարդիկն իրենց գործերէն, ու գործել անվհատ, շարունակելով շիտակ ճամբան, որ կը տանի դէպ ի հանրային օգուտը:

## Ք Ր Ո Ն Ի Կ

— Ազնուարիայ Տիկիև Երանուհի Ա. Բարթող Պէյ Երեքշաբթի Հոկտ. 28ին Պօղոսեան Ազգ. Երկ. Վարժարանն այցելելով տեսաւ ինչինչ նորոգութիւններն ու շատ գոհ մնալով՝ իր կողմէն 48 ոսկի նուիրեց Ազգ. Մտուկին: Այս գումարէն 42 ոսկին կը յատկացուի գլխաւորաբար վարժարանին կոյուղիները — որոնք երկար ատենէ ի վեր աւրուած էին — նորոգելու ու մաքրելու, եւ հին Առաջնորդարանի շէնքին մէջ կատարուած ինչ ինչ նորոգութեանց ծախքերուն. 5 ոսկին Աղքատախնամին կը տրուի, իսկ 1 ոսկին Երկ. վարժարանին սանունց շաքարեղէն բաշխելու:

— Վսեմ. Աքրահամ Բարթող Պէյ նուիրեց 25 անգլ. ոսկի Տեղիս Պօղոսեան Երկ. վարժարանին գրասեղաններուն նորոգման և ուրիշ ծախքերուն համար, որոնք անհրաժեշտ նկատուած էին նոյն վարժարանին Պատ. Հոգաբարձութեան կողմէն:

Նորին Վսեմութեան և իր Տիկնոջ այս կրկնակի նուիրատուութիւններն ա՛յնքան գնահատելի որքան հետևելի օրինակներ են բարեգործութեան, որով անգամ մըն ալ կ'ապացուցուի թէ՛ յիշեսլ պատուական գերդաստանը սկիզբէն ի վեր չէ՛ թերացած դէպ

ի ցեղն իր ունեցած նուիրական պարտականութեանց կատարմանը մէջ. ինչ որ առիթ կուտայ հրապարակաւ արտայայտելու հոս հանրային գոհունակութեան զգացումները, զորս՝ միշտ տածած է տեղիս կրթասէր հասարակութիւնը Վսեմ. Ա. Բարթող Պէյի նկատմամբ, որ դարձեալ կը շարունակէ ըլլալ և չը դադարի ըլլալէ նոյն ժողովրդական մարդը, քանի որ Աղեքսանդրիոյ հասարակութիւնը համոզուած է թէ նորին Վսեմութիւնը սիրտ մ'ունի վերջապէս որ կը բաբախէ հանրային օգտին ու բարօրութեան եւ ազգային մանկտիին, այն է ապագայ սերնդին դաստիարակութեան համար: Բարթող Պէյի ըզեղին մէջ մուտ չէ կրցած գտնել այն գաղափարը թէ՛ մարդ մը կրնայ արժանի ըլլալ բարձրանալու ազգ. իշխանութեան աթոռի մը վրայ, առանց իր կողմէն նիւթական կամ ուրիշ զոհողութիւններ ընելու ազգային հաստատութեանց ի նպաստ: Թաղականի մ'առաջին արժանիքն է, կ'ըսէ, իր անձնական քսակը դրնել ի սպաս ո՛ր և է ազգագուտ ձեռնարկներու:

Աւերը յաջողինք Բարթող Պէյի պէս անձնուէր ու դրական մարդու մը քով գնել անկեղծ ու բանիմաց խորհրդականներ, դիւրին է այնուհետեւ հարթել բոլոր դժուարութիւնները, տիրապետել տալ ազգ. օրէնքը, գործադրել տալ անոր օգտակար տրամադրութիւնները, և իրագործել, մէկ խօսքով, հանրութեան չոլոր բանաւոր բաղձանքները:

Սակայն, ցա՛ւ է խոստովանիլ, մեր մէջ կը գտնուին դեռ կարմիրներ, որոնք, միջավայրին պահանջներն անտեսելով ամեն բան կոխտուել կ'ուզեն ու չեն խղճեր, կամ աւելի ճիշդը, կ'անբանանան կասկածելի հռչակելու մամուլ մը, որ իրեն սկզբունք ըրած է ու բնաբան՝ փողովուրդին կամքին գե-

րիշխանութեան, անոր իրաւունքներուն և շահերուն պաշտպանութեան ու, հոս ալ Ազգ. Սահմանադրութեան անթերի գործադրութեան համար մինչեւ վերջը մղել կուր:

— Այրի Տիկին Մարի Ե. Պէն շեանի ընդ Տիար Պաղտիկ Առաքելեանի նշանախօսութիւնը տեղի ունեցաւ Հոկտ. 26ին Կիրակի օրը Տիար Կեան Նիզամեանի բնակարանին մէջ:

Մեր անկեղծ խնդակցութիւնները:

**ՆԱՄԱԿ ԳԱՀԻՐԷՆ**

Գահիրէ, 26 Հոկտ. 1902

1. Որբախնամ հինգ ընկերութիւններն ու ազգատախնամ ընկերութիւնն անցեալ տարուան Սեպտեմբերին փաստերկու անձերէ բաղկացեալ մնայուն Խառն Յանձնաժողով մը կազմեցին, պաշտօն տալով անոր որ ի նպաստ իրենց հանրային ձեռնարկներ սարքէ և արդիւնքը բաժնէ մէջերնին, բաժին մ'ալ Պոլսոյ ազգային Պատրիարքարանի որբերու սնտուկին հանելով:

Ըստ պայմանագրի, որ վաւերացուած է առաջնորդարանէն, այդ յանձնաժողովի անդամոց պաշտօնավարութեան շրջանը մէկ տարի է. այդ շրջանը լրացած ըլլալով, անցեալ Շաբաթ օր 11 Հոկտեմբեր, յանձնաժողովը իր վերջին նիստն ըրաւ առաջնորդարանի մէջ, որոչեց իր համարատուութիւնը և հրատարեցաւ:

Յանձնաժողովին սնտուկը մէկ տարուան մէջ 320 ոսկիի չափ զուտ արդիւնք ունեցած է, որ արդէն ամենամեծ մանամբ բաժնուած է ընկերութեանց և կեդրոնական որբերու սնտուկին մէջ, և հազիւ քանի մը ոսկի կը գտնուի Գանձապետ Տիար Առաքել Պէրպէրեանի քով:

Անժիլապէս եաքը տեղի ունեցաւ  
Խառն յանձնաժողովոյ նորընտիր ան-  
դամոց նիստը: Այդ անդամներն են,  
Տեառք:

Երուանդ Աւագեան և  
Առաքել Փարիսեան  
Վասպուրականի Որբախնամ Ըն-  
կերութենէն:

Նազարէք Աղազարս և  
Մարտիկ Բրուսեան  
Որբերու Հոգատար Ընկերութե-  
նէն:

Առաքել Պերպերեան և  
Կիրակոս Շահրոզեան  
Գահիրէի և Արաբկիրու Որբասի-  
րաց Ընկերութենէն:

Խաչիկ Պերպերեան և  
Սարգիս Թաքարեան  
Ակնայ Որբախնամ Ընկերութե-  
նէն:

Մրայիոն Սարգիսեան և  
Առաքել Էփշիեան  
Սեբաստիոյ Որբասիրաց Ընկերու-  
թենէն:

Յակոբ Քիրճեան և  
Խաչիկ Տ. Անդրեասեան  
Ազգատաննամ Ընկերութենէն:

Անդամներէն տասը ներկայ էին:  
Գաղտնի քուէարկութեամբ ընտրուե-  
ցան:

Տ. Նազարէք Աղազարս  
Ատենապետ վերընտրեալ:

Տ. Մրայիոն Սարգիսեան  
Ատենադպիր վերընտրեալ:

Տ. Երուանդ Աւագեան  
Գանձապետ:

Տ. Մարտիկ Բրուսեան  
Հաշուակօւլ վերընտրեալ:

Յանձնաժողովը յետոյ զբաղեցաւ  
շարաթական վիճակահանութիւն մը  
կազմակերպելու խնդրովը, որուն կը

մնայ մաղթել կատարեալ յաջողու-  
թիւն:

2. Քաղաքիս Բարեգ. Ընկերու-  
թեան Ընդհանուր Ժողովոյ Իււանի և  
Գործադիր Ժողովոյ վերընտրութիւնը  
գարձեալ գազանի քուէով կատարուե-  
ցաւ անցեալ Կիրակի և ընտրուեցան  
Տեառք:

Յարութիւն Յարութիւնեան,  
Փիշիպպոս Եագուպեան,  
Աքրահաւ Եագուպեան,  
Զօրիկ Երկանեան,  
Յարութիւն Ճեպճեան,  
Մարտիկ Բրուսեան,  
Օզսէն Ստեփանեան,  
Սարգիս Գարաշանեան,  
Ապահ Պեհրուսեան:

Կր փափաքէինք որ ընտրեալները  
սիրով ու համերաշխութեան ոգիով  
իրարու կապուած գործեն յօգուտ ըն-  
կերութեան:

ՉԱՅՆ

ԼՈՒՍԱԲԱՆՈՒԹԻՒՆ ՄԸ

Կ. Պոլսոյ հայաթերթերն առհա-  
առակ գովեսներ գրեցին Ադն. Ճիլին  
Երանուհի Ա. Բարթոլ Պէյի նուէրնե-  
րուն ու նպաստներուն մասին, զորս ա-  
ռատաձեռնօրէն բաշխեց մայրօքաղա-  
քին ազգ. կրթական ու բարեգործա-  
կան հաստատութեանց, իր ամառնա-  
յին օգափոխութեան առիթովը: Վեր-  
ջերս սակայն այդ թերթերէն Արեւելք  
մահաւանդ, Զմիւռնիոյ Արեւելեան  
Մամուլին մէջ քիչմը կանուխ հրա-  
տարակուած Զմիւռնիոյ Աղբ. Հիւան-  
գանոցին վերաբերեալ այդ կարգի  
լուր մ'առաւ ա'յնքան ծեծեց ու  
ծեծեց որ երանելի եղէչէ Թոքոս-  
ԵԱՆԸ — Եգիպտոս ոտք դնելէ առաջ

X

մայրաքաղաքին պետական փուռերէն մէկուն մէջ նոյնինքն թապալեաւ-չաշ-դրճի հաճի Արթին Գարողանեան կոչ-ուած մարդուկը—ինքալ մարմալն ունե-ցաւ իր... տրամաբանութեամբը քննա-գատելու Տիկին Երանուհի Բարթող Պէյի արարքը:

Արդ, փափագելով լուսաբանել այս խնդիրը, գիմեցինք աղբիւրին, և Տիկին Երանուհիէն ստացանք հետեւեալ պաշտօնական գրութիւնը, զոր նոյնութեամբ կը հրատարակենք ըստորև.

Ս. Լուսաւորչեան

ԱԶԳԱՅԻՆ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Զմիւռնիոյ

Թիւ 474

Զմիւռնիա 16,29 Սեպտ. 1902

Ազնուափայլ

Տիկին Երանուհի Բարթող Պէյ

Կ. Պօլիս

Ազնուափայլ Տիկին,

Հոգաբարձութիւնս վիճակիս Ա. ուաչնորդ Ամեն. Տ. Մելիքսեդեկ Սըբազան Հօր միջոցաւ շնորհակալութեամբ ընդունեցաւ հարիւր տասնութ (113) Քրանք գոր բարեհաճ կամօք նուիրած էք Հաստատութեանս:

Հոգաբարձութիւնս նուիրական պարսք կը համարի յայտնել Ձեզ իւր խորին շնորհակալիքը Ձեր ազնուագութեան որդմասիրտ զգացմանց համար, որով իրաւամբ Ձեր մարդասիրութեամբ կը փայլիք Հայ ազգին բարձր դասուն մէջ, եւ վէհանձնական ազնիւ զգացմանց օրինակելի տալար կը հանդիսանաւ ուրիշներու:

Ուստի Հոգաբարձութիւնս չունի այլ ինչ՝ բայց միայն արտազգին մաղթել Ձեզ երկար եւ երջանիկ կեանքի փառս ազգիս:

Ընդունեցէ՛ք, Ազնուափայլ Տիկին, մեր անկեղծ յարգանաց հաւատարմութիւնս: Ի Դիմաց Ս. Լուսաւորչ. Ազգ. Հիւանդանոցի.

Ատենադպիր

Ատենապետ

Յովն. Գ. Բարազեան

Նշան Յ. Հարենց

ԿՆԻՔ

Յ. Գ. Ընկալագիրն Ամեն. Տ. Մելիք. Սըբազան Հօր յանձնած եմք:

Զմիւռնիոյ Ազգ. Հիւանդանոցի Հոգաբարձութեան ընկալագիրը — Ամեն. Մուրատեանց Սըբազանին յանձնուած — չենք կրնար բնականաբար հրատարակել, բայց, հասարակութեան ողջամիտ մասին գաղափար մը տալու համար այս եզէչէ կոչուած ժամկոչ — դպիր — իւրազիր — տնտեսաւորաւոր — թապալեաւ-չաշդրճի — տնտեսական նկարագրին վրայ, — եթէ ունի նկարագիր — պարտք կզգանք հրապարակաւ յայտարարել թէ՛ բարեգործութիւն բառն անգամ բերանն առնելու անարժան է մօրուտի այդ կենդանին, որ իր սուղուն գոյութիւնը կը պարտի հանրութեան ներողամտութեանն ու սգիտութեանը:

### ՈՍԿԵՐԻՉՆԵՐԸ

Բարոյախօս մը լինելէ շատ հեռի կը գտնուիմ, սակայն փորձառաբար համոզուած եմ թէ արհեստները արհեստաւորաց կենցաղին վրայ տարօրինակ ազդեցութիւններ կընեն. ըսել կուզեմ թէ արհեստներու մէջ մի ճիւղին պարագայներ մասնաւոր յատկութիւններ կ'ստանան անկէ, յատկութիւն՝ որ փոխանցիկ է վարպետէն աշակերտին, հետեւաբար նախնիքներէ ժառանգական. օրինակի համար, ժողո-

վերդական առածի կարգ անցած են ստորնութեան մասին շրհանկիրներն ու ձկնորսները, որովհետև խեղճերը կոշտ ու անկիրթ լինելուն՝ չեն կրնար ծածկել իրենց պակասութիւնները եւ խաղք կը լինին. մինչդեռ անգին ստորնութեան գազաթնակէտին հասած ուրիշ արհեստաւորներ կան՝ որք իրենց ճարպիկութեամբ ո՛չ միայն յաջողած են ժողովրդեան ուշադրութենէն վրիպել՝ այլ և միշտ անոր համակրանքը վայելած են, որովհետև նրա ցած սրիկաներ են, գիտեն վարպետութեամբ քօղարկել իրենց թերութիւնները: Ես երկայ ժամանակ գործ ունենալով ոսկերիչ արհեստաւորներու հետ, ներուի ինձ, անոնց բարուց վրոյ հակիրճ քննադատական մ'ընել այս սուղ էջերուն և բառնալ իրենց մոլութիւնները ծածկող վարդագոյն քօղը:

Ոսկերիչները ընդհանրապէս ազգասիրական, ընտանեւորական և բարոյական զգացումներէ զուրկ կը լինին (հազուադիւր բացառութիւնները յարգելի են անշուշտ), հաճոյասէր են, մեծ ճաշակաւ կը հագուին, ժամանցի համար միշտ գինետունը կը նախընտրեն, ուր համախմբուելով անընդհատ կը շաղակրատեն բացակայ արհեստակիցները խօսքի նիւթ ունենալով, որոց վրայ անլուր բամբասանքներու տարափ մը կը տեղացնեն: Դիտուած է որ, անկուտի ժամանակին, ազգային խնդիրներու վրայ վիճաբանելու կելլեն թեր ու գէժ կարծիքներ յայտնելով. օրինակի համար, «Ռուսը ՍանՍթէֆանօ եղած ժամանակ, կըսէ մին, եթէ ներսէս Պատրիարքը անոր թելադրութեանցը համաձայն Հայաստանի բարեւալութիւնը անկէ պահանջէր և Սուլթանին անօրինութեանցը գէժ բացարձակապէս բողոքէր նէ՝ հիմայ մենք շատո՞նց ազատուած էինք թիւրք բռնակալութեան ճիրաններէն, հիմայ հոն հանգիստ կեանք կը վարէինք»:

Անցելոյն քանի մը դէպքերը յիշելէ ետք հանրային ներկայ գործիչներու վրայ կը խօսին, յորոց ոմանք իրենց գովեստից և այլք պարսաւանաց կ'արժանանան:

Ըսինք թէ ընտանեկան սիրոյ անըզգայ են ոսկերիչները. արդարև օրինակներ չեն պակսիր մեր խօսքը հաստատելու, անոնցմէ ոմանք աղջկան մը դրամօժիտը յափշտակելու համար կ'ամուսնանան, այլք հոմանուհոյն ապագային գինեպանի դեր կատարել տալով զայն շահագործելու մտադրութեամբ կ'ամուսնանան, և դեռ ի՞նչ այլանդակ ծրագիրներ կը յղանան ոսկերիչները ամուսնական խնդրոյն նըկատմամբ. հետևաբար ամուսնալուծութիւններն ալ անպակաս կը լինին. ոսկերիչներու ընտանեաց մէջ, դուռն ուրեք երկու կենակիցներ իրենց կոչման հաւատարիմ կը մնան և իրարու վրայ ճշմարիտ սէր կը տածեն. մինչդեռ ոսկերիչի մը համար աւելի մտահոգութիւն կը պատճառէ աշակերտին բաժանումը քան կնոջը. հազուադէպ չեն այնպիսիներ՝ որ իրենց տուփանաց կատարեալ գոհացումը աշակերտէն կ'ըսպասեն՝ գոհ կամ դժգոհ կին մը ունենալով մեկտեղ:

Այն անձնաւորութիւններ որ ազգային կեանքով կը շահագրգռուին, ուսման և գիտութեան կարեւորութիւն կուտան, ընթերցատուն — թատրոն կը յաճախեն, զինետունէ կը խորշին, մէկ խօսքով իրենց համապատասխան ընթացքին չեն հետեւիր, աւտելի են իրենց. այս վերջնոց համար ոսկերիչները ասացուած մ'ունին. «այն մարդը որ գինետուն, սրճարան ևն... զի յաճախեր՝ էջ է» կ'ըսեն. սակայն երբ ուսումնասէր անհատ մը գեղեցիկ զաւակ մ'ունենայ և ոսկերչի մը քով աշակերտ տալ ուզէ, անատեն մեծ ճարպիկութեամբ ինքզինքնին ընտանեւէր, բարոյասէր, ազգասէր, գե-

ղարուետի համակիրներ կը ձևացնեն՝ մարդկային ամեն բարեմասնութիւններ իւրացուցած ըլլալ կը կեղծեն, մինչև որ յաջողին ներկայացուած տղան իրենց քով առնել. յետ այնու, աւելորդ է ըսել, նորեկին սրամադրութիւնները կը փորձեն, եթէ սա խելահաս ու պատուաւոր պատանի մը լինելով իրենց համամիտ չ'գտնուի՝ շուտ մը ճամբայ կուտան առարկելով թէ իրենց արհեստին կոչը չ'ունի:

Ահա այսպէս, ոսկերիչները ինքնին խտացեալ անբարոյականութիւններ են և ոսկերիչնոցը քաղաքիս անբարոյականութեան է՛ն զօրաւոր որրաններէ մին, ուր դժբաղդաբար դպրոցական մատաղատի պատանիներ արհեստ սորվելու նպատակաւ յաճախ յանգէտս կուգան գլորիլ անբարոյականութեան ովկիանին մէջ:

Ընթերցողներէ շատեր մինչ ցարդ վերոյիշեալ մտւածութիւնները աւանդաբար վանեցուց կամ պարտից միայն վերագրել սովոր լինելով, գիտեմ շատ պիտի զարմանան ներկայ նկարագիրս կարդալով, սակայն պարտինք յաւելցունել թէ մենք ցաւօք սրտի ուղած ենք ժողովրդէան ուշադրութիւնը հրաւիրել ոսկերչաց այդ կացութեան վրայ, և շատ ուրախ պիտի ըլլանք եթէ անոնք զգալով իրենց ապականիչ ընթացքը՝ քիչ թէ շատ ուղղութեան գան:

Գահիրէ 29 Հոկտ. ԵՄԵՆ

### Ա Ձ Ք

ՏԱՍԸ իւզանկարներուն վիճակահանութիւնը տեղի պիտի ունենայ Պ. Ղազիկեանի ՆՈՐ ԴԱՐ կաթնարանը, Նոյ. 6, հինգ չարթի երկկոյեան ժամը 7 ին:

### ՏՐ . ՍԱՐԳԻՍ Բ. ԺԱՄԿՈՉԵԱՆ

Ամերիկեան վկայեալ բժիշկ

Սեսուքիս փողոց թիւ 1

«Փար s'Աշխատանքի»ի սպարանիև վրայ ի Ա. յարկը

Տօգթէօր Սարգիս Բ. Ժամկոչեան պատիւ ունի ծանուցանել Տեղիս արդոյ հասարակութեան թէ՛ ինք հաստատուած է վերջնապէս քաղաքիս մէջ ու պատրաստ է դարմանելու ընդհանուր հիւանդութիւններ: Մամազիտօրէն ու Ամերիկայի կատարելագործուած ու նորագոյն բժշկական փորձերով ու սխաղեմով կը բուժէ Ֆանաւանդ արեան վերաբերեալ զանազան ախտերը:

Հիւանդները կ'ընդունի ակն օր կէս օրէն ետքը ժամը 2-5: Իսկ Չորեքշաբթի և Շաբաթ օրերը առտուան ժամը 9-11 ձրիաբար կը դարմանէ իրեն զիմոզ աղքատ հիւանդները:



Երիտասարդ մը, որ քաջ Անգլիագէտ է, պատրաստ է մասնաւոր դասեր տալ անգլերէնի, տուներու մէջ ալ, խիստ գոհացուցիչ և զիւրաճատչելի պայմաններով:

Փափագողները դիմեն Փիւնիկի խմբադրութեան:

### ԱՐԱՔՍ

Հայկական տպարանը թէ՛ հայերէն, թէ՛ գաղղիերէն և թէ՛ ուրիշ լեզուներով ամեն տեսակ տպագրական գործեր կը կատարէ՝ մեծ խնամով եւ, ինչ որ նուազ կարեւոր չէ:

ԽԻՍ ՉԱՓԱԻՈՐ ԳԻՆԵՐՈՎ,